ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. Չարենցավան **10.07.2023թ**

Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովի նիստին ներկա են ավագանու անդամներ Արսեն Խլղաթյանը ,Վարդան Մակինյանը, Գևորգ Գևորգյանը, Նարեկ Բաբայանը, Անահիտ Խեչոյանը,: Նիստին ներկա չեն ավագանու անդամներ Տարոն Եփրեմյանը, Սահակ Բաղդասարյանը: Նիստին ներկա են համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը , համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանը:

Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը անցկացրեց հերթական նիստը:

Զեկուցող՝ Բ.Բալբաբյան :

Օրակարգում՝

1. **Չարենցավան համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:**

Լսեցին՝

1. Ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանը զեկուցեց Չարենցավան համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու նախագծի մասին՝ ներկայացնելով կից հաշվետվությունը:

Արտահայտվեցին՝

1. Ա.Խեչոյանը առաջարկեց տրամադրել հողային հաշվեկշռի նախկին տնտեսային և բովանդակային հաշվետվությունը, այս տարվա տվյալների հետ համեմատականներ անցկացնելու համար :

Բ.Բալբաբյանը համաձայնեց՝ նշելով ,որ նախկին ու ներկա հաշվետվություններում համեմատական հարաբերությունը գրեթե նույնն է, չնչին (1%) տարբերությամբ:

Վ.Մակինյանը հարցրեց , թե այս ընթացքում որևէ հող անցել է պետությանը, Բ.Բալբաբյանը պատասխանեց , որ ոչ:

Ն.Բաբայանի այն հարցին , թե արդյոք նպատակային նշանակություն ունեցող անտառային հողերը ևս տրվում են վարձակալությամբ , Բ.Բալբաբյանը նշեց ,որ անտառային գոտուգործառույթներն իրականացվում են մրցութային կարգով:

Նախագահ՝ **Արսեն Խլղաթյան**

Քարտուղար՝ **Գևորգ Գևորգյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 11-ին կայանալիք արտահերթ նիստին ներկայացվող ներքոնշյալ որոշման նախագծի քննարկմանը տվեց դրական եզրակացություն:

Օրակարգում՝

1. **Չարենցավան համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:**

Կողմ- 5 **դեմ-0** **ձեռնպահ-0**

1.Վարդան Մակինյան

2.Գևորգ Գևորգյան

3.Արսեն Խլղաթյան

4.Անահիտ Խեչոյան

5.Նարեկ Բաբայան

Նախագահ՝ **Ա.Խլղաթյան**

Քարտուղար՝ **Գ.Գևորգյան**

10.07.2023թ.